Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6783

Հրատարակութիւն ԳՐԻԳՈՐ Զ. ԵԱՐԱԼԵԱՆՑԻ

XVI

Բ. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑ

ՏԱՐԱԺԱՄ ՊՍԱԿ

ՊՕԷՄԱ

(Ղազախի գիւղական կեանքից)

ԹԻՓԼԻՍ
Արագատիպ Մն. Մա[illegible]-հիրմեանցի
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 31.
1901

891.99
S-45

891.99 13
Տ-45
-6 ՆՈՎ 2011

Բ. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑ

ՏԱՐԱԺԱՄ ՊՍԱԿ

ՊՕԷՄ

(Ղազախի գիւղական կեանքից)

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի
ՄԻՐՅԱՑԻԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 81.
1901

58422
20.08.2013

Дозв. ценз. Тифлисъ, 11-го Апрѣля 1901 г.

ԻՐ ԴԱՍԸՆԿԵՐ

ԼԵՒՈՆ ԵՊԷՄԵԱՆՑԻՆ

Թո՛ղ, անկեղծ սրտով ձօնեմ Քե՛զ, ընկեր,
Գիւղական կեանքի ցաւերից մի շար.
Թէեւ անպաճոյճ, տխար է պատկեր,
Բայց ես պատմում եմ դէպքը բառ առ բառ:

Բ. Տ.-Ղ.

Ա

Լուսինը պայծառ, խաղաղ ելթերից
Փայլուն շողեր էր սփռում իրենից.
Եւ բիւր կանթեղներ սերտ սիրով կցած
Լոյս էին թափում երկրիս վրայ ցած։
Երկնքից թափուած վառ շողերի ծոր
Լուսով էր պատում դաշտ, անտառ և ձոր.
Երկնակամարին աստղեր պսպղուն
Գունատուած հանգել, կորցրել էին գոյն
Եւ հորիզոնից հեռու շատ դանդաղ
Հեռանում էին հանգիստ և խաղաղ...
Զեփիւռը անուշ գեղեցիկ աշնան
Սուլում էր մեղմիկ ձմրան նախերգանք.
Շատ դառն էր թւում նուագը մարդկանց
Եւ քաղցր օրօր՝ որրանում մանկանց.
Իսկ լեռը մանող տան պառաւ կանանց
Քուն էր մօտեցնում աչքերին կամաց...

Փըշում էր մեղմիկ շվշվացնելով,
Աղքատ գիւղացու խուղը սառցնելով.
Քաղցր քուն բերեց բոլորի աչքին,
Ստիպեց գիւղացոց մտնել անկողին։
Երկար ժամանակ նոցա ականջին
Հասնում էր դրսից քամու դայլայլին,
Որպէս մեղեդի երգում էր նանի,
Որ փակուի յոգնած աչք շինականի...

Բ

Եւ Կողբայ գիւղում տիրեց լռութիւն,
Հանգաւ ամեն տեղ աղմուկ շըշընջիւն.
Քաղցրալուր երազ շինական մարդկանց
Պատմում էր զրոյց, երկնքի կենաց։
Ըշընջում էր, թէ ինչպէս երկնքում
Պիտ՝ ապրին նոքա անհոգ, անտրտում.
Պէտք է ունենան բիւր օրավար հող...
Բազմաթիւ եղներ պնդակազմ, կարող։
Առանց ռանչպարի պէտք է արածեն,
Որ իրենց տիրոջ հոգս չըպատճառեն.
Երեկոյեան ողջ տուն են դառնալու,
Տան տիրոջ ընչքից մաղ չէ պակսելու...

Տանը խինդ բերկրանք, պաշարը առատ,
Սեր, կարագ, մածուն ամեն ինչ պատրաստ։
Այնտեղ նոցանից հարկ չեն պահանջի,
Ոչ էլ տանուտէր կըգայ կըծեծի...
Եւ ոչ վաշխառուն պարտքի փոխարէն
Կըզրկի իրեն մարալ եղներէն...
Ոչ էլ եասաւուլ կըգայ նորա մօտ,
Խեղճի քիթն ու պռունգ կանէ արիւնոտ։
Նա ոչ մի բանի հոգս չէ քաշելու,
Ստուած ամեն բան ձրի է տալու...
Թէ բոլոր մարդիկ համերաշխ կ'լինին,
Աղքատ և հարուստ միասին կապրին.
Եւ նոյն իսկ աղէն՝ տզրուկ գիւղապետ
Հաւասարապէս կապրէ իրենց հետ...
Զմայլում է ներքուստ գիւղացու հոգին,
Ժպիտն ու խրախճան խաղում են դէմքին.
Քաղցր է խըռըմփում Մորփէի գըրկում,
Հրեշտակն էլ վերուստ հոգանի կարգում։

Գ

Գիւղական այդ վեհ, խաղաղ դրութիւն,
Խառնակում է մի անախորժ թընդիւն.

Խրճթի առաջ կիտուել ժողովուրդ,—
Հասակաւորներ, պատանիք, մանկունք։
Խփում է ուժգին թմբկին թըմբկաչին,
Ծլծվացնում է փողը զուռնաչին.
Պարում են մարդիկ, կաքաւում աղջկունք,
Ըրջանապար են բռնել հայ հարսունք։
Ցանկացան ցոյց տալ իրենց տանտէրին
Ուրախութիւն, խինդ, օրեր թանկագին...
Կանցնին կըգլորուին տասնեակ տարիներ
Եւ այդ տան երդիկն ուրախ ըոպէներ
Բնաւ չի տեսնի... վառ բոցն օջախի
Կարճ ժամանակում ծխի կըվոխուի...
Ցօնուում է այնտեղ պսակադրութիւն,
Նորա համար են քէֆ, զուարճութիւն։
Տան միակ իշխող տարիքով Ադատ
Իրեն կին կուզէ—ընկեր հարազատ։
Բայց նա անհանգիստ, հոգով վերացած,
Մըտամոլոր և խելքահան եղած,
Նստած է շվոթուած մակարների մէջ,
Նորան չեն գրաւում այդ քէֆերն անվերջ...
Սլացած է նա մտքով այն տեղը,
Ուրտեղ ինչում է քնքոյշ Նաթէլը.
Զգում է իւր սրտում, որ այդ գեղանին
Շատ խորն է գցել արմատ սիրային։

Սիրում է նորա վարդագոյն այտեր,
Սև ու կախարդող գըրաւիչ աչեր.
Բայց աւաղ, Նաթէլն հասակ չէ առած,
Տասներկու գարուն նոր է բոլորած,
Որ գերող աչեր, հայեացքը ցընցող,
Երբէք գիւղի մէջ չունենան մրցող...

Դ.

Հորիզոնից վար թեքուել էր արդէն
Դիցուհի լուսին լեռան ետեւէն.
Ջինջ ու կապուտակ երկնակամարին
Կրկին շողացին աչկունք երկնային։
Գրկած են պահում լուսնեակի շողեր
Միայն բարձրաբերձ լերանց կատարներ.
Ձիւնթաղ գագաթներ սեպուհ, փառաւոր
Հրավառւում են վեհ, արտասովոր...
Գիւղի վերնակողմ՝ աստղագէտ ծերեր
Կիտուել են խումբ-խումբ աղենց կտուրներ.
Դուշակում էին նայած աստղերին,
Թէ ինչ է սպասում մեր հողագնդին.
Ահա, սլացան աստղներ վէտ-վէտ,
Դուշակ էր՝—երկրիս սպասում է աղէտ.

Ահա, գիսաւոր մի ասող խաւարեց,
Փաստ է, որ մի ջոջ հոգին աւանդեց...
Մերթ լսում են լուռ, ինչպէս սուլելով
Զեփիւռն է անցնում մեղմիկ շոյելով,—
Սփռելով բուրմունք անուշ, կենսատու,
Ամեն ցաւերի դարման ու հատու...
Խփում է հեղիկ թմբկաթաղանդին
Զգացնելով մարդուս հոգուն ու սրտին։
Մի քանի րոպէ և ահա Մորփէն
Քնոյ սերմերը շաղեց երկնքէն
Վեհ էր բնութիւն, տեսքը՝ կենարար...
Այլ չէր ազմկում մարդկային բարբառ
Բնութեան անուշ մեղմ եղէջներ,
Գիւղական կեանքի այդ անգին էջեր։
Միակ շների ոռնոց հաջոցներ
Ձփոթում էին այս հոգեշունչ գիշեր։
Ազատ թագւորի մօտը մարդ չըկայ
Փոքի լռութիւն թող լինի վկայ.
Գնացել են կամաւ, որ հանգստանան
Եւ առաւօտեան կանուխ վեր կենան,
Որ նորափեսի տանը խըմբուին
Արշաւանք գործեն ու բերեն հարսին...

Ե

Նոր էր լուսացել։ Դեռ ոչ մի տեղին
Չէր իշխում ճաճանչ կարմիր արևի.
Դեռ նոր թռչուններ թաւուտ ընրերից
Դուրս էին եկել թագստեան տեղից։
Բայց հայ գիւղացին թռչուններից վաղ
Վարի էր քշում եզներին դանդաղ։
Գիւղի ժիր աղջիկ, հարսն երեսկալած,
Ուսին ահագին կժեր շալակած—
Վազում են թեթև մերձակայ առուակ,
Որ շուտ ջուր բերեն վաղորդեան յստակ։
Կախել են գլուխներ խոնարհութեամբ ցած,
Որպէս թփի տակ համեստ մանուշակ.
Եւ մերթ սիրատենչ շեշտակի հայեացք
Գողունի կերպով նետւում անցնողաց։
Աչքեր, որ կամար սաթեայ ունքերով,
Սև, փայլուն թաւշեայ արտանունքով
Գեղազարդարուած—սիրոյ են պատկեր՝—
Նման չէ ստեղծել Արարիչ մեր Տէր...
Լերան կարկաչող առուակի մօտին
Կանգնել են շարքով աղջիկ, հարս և կին.

Միակ տեղն է դա, ուրտեղ հայուհի
Բանում է ազատ լեզուն բլբուլի։
Մեծերն աներկիւղ խօսում են խնդում,
Հարսներն գլխակոր լուռ են և լսում.
Կամ մի առանձին համեստ խումբ կազմած
Իրար ականջին շշշնջում կամաց։
Իսկ հայ ամօթխած չափահաս աղջիկ
Դիտում է անթարթ պարտէզ ու այգին.
Երջանիկ կ'լինի տեսնել այն տղին,
Որին գերի է իւր սիրտն ու հոգին...

Զ

Փեսատան դրան դեռ լուսածագին
Բազմաթիւ մարդիկ հաւաքուած կային.
Փողի ծվծվոցն ականջ էր ծակում,
Զայնը թմբուկի մարդկանց խըլացնում։
Պարզ նախաճաշից արագ վեր թըռան
Կտրիչ մակարներն ու ձիանք եկան.
Զիարշաւեցին մերձակից կալեր,
Ճօճում են, զարկում ձեանց մտրակներ։
Հրացան են պարպում, աղաղակ հանում,
Զիուց վայր ցատկում՝ նորէն բարձրանում...

Ընդարձակ կալում շրջան են կազմել,
Երկու պատանի իրար կոխ բռնել.
Այսպէս ուրախ, ժիր ճանբայ են ընկնում,
Դէպի Ոսկէպար, դէպի հարսենց տուն։

Է

Արևի պայծառ ճառագայթներով,
Նորա կենսատու շողշողուն լուսով
Գեղեցիկ էր աշնան համայն բնութիւն,
Ջնջում էր բերկրանք և ուրախութիւն։
Բարձրահուպ լերանց վրայի ձիւներ
Շողշողում էին որպէս բիւրեղներ.
Տերևթափ մայրին հանդարտ, կամացուկ
Խշխշում էր մեղմ հիւսիսի քամուց։
Անտառի միջի ոլոր կածանով,
Կայտառ մակարներն ուրախ երգելով
Արշաւում էին դէպի Ոսկէպար.
Մերթ վայր են իջնում, սկսում են պար։
Նորէն ձեանք ցատկում, դիմում են յառաջ
Մտրակ հասցնելով իրար ձախ ու աջ...
Լերան գագաթից հայեացք ձգեցին,
Հեռու կարծես թէ ծուխ նըշմարեցին.

«Ուռռա՜», թընդացրին ողջ միաբերան,
Բոլորի սրտեր ցնծութեամբ եռան.
Եւ միահամուռ բոլորի հայեացք
Ակամայ դէպի Ազատն էր դամուած.
Նա էլ էր ժպտում լռութեամբ, հանգիստ,
Թնդում էր ներքուստ նորա հոգին, սիրտ.
Բայց կարծես մի միտք գերել էր նորան—
Խառնակ էր խելքի մտաց շտեմարան։

Ը

Նա նշանածից մեծ էր հասակով,
Սակայն ո՛չ թէ հինգ կամ թէ վեց տարով՝
Մեծ էր չորս անգամ իւր նշանածից.
Երեխայական խաղալիքներից
Դեռ չէ բաժանուել սիրունիկ Նաթէլ,
Նոր է տասներկու տարեկան դարձել։
Զրկուելով վաղուց հօրից և մօրից,
Նոցա սիրային փայփայանքներից՝
Նա հասակն առաւ ճնշուած ու երկչոտ,
Մարդկանց շրջանից քաշուող, ամաչկոտ...
Դեռ նոր էր նայել արար աշխարհին,
Նոր էր անցատում նա չարից բարին,

Նոր էր ազատուել տան չորս պատերից,
Խնամատարների հրսկողութիւնից։
Կարողանում էր նա այժըմ ազատ
Աշխոյժով փոխել քայլերն հարազատ.
Առանց ընկնելու կամ սայթաքուելու
Եւ առանց ամուր պատից բռնելու...
Մանուկ հասակում զոհ է դառնում նա
Մի քահանայի շահախնդրութեան,
Առանց խղճալու այդ որբ երեխին,
Ուշք չդարձնելով մանուկ տարիքին՝
Կնութեան տուաւ ծերուկ Ազատին...
Գործը կատարեց ու կաշառք առաւ,—
Մնանկ Ազատից քսան մանէթ ստացաւ.
Ոտնատակ տուեց իւր իրաւունքներ,
Հայաստանեայց սուրբ, անբիծ կանոններ։
Նա՛, որ կոչուած է լոյս ծաւալելու,
Իւր հօտից չարիք կամաւ ջնջելու՝
Ինքն է աջակցում կաշառք վերցնելով,
Գաղան որկորին մարդիկ զոհելով...
Հասկացել էր այդ և Ազատ փեսան,
Հրաժարուել ուզէր,—անօրինական.
Այդ դաժան մտքեր ուրախութեան օր
Մէկ միւսի հետև անցան առջևով։
Տածեց դէպ իւր ես մի հուժկու զգուանք,

Բուռն ատելութիւն և արհամարհանք...
Նա այդ մտածմանց մէջ էր մոլորուած.
Երբ հրացանի ձայնն ականջին լծնդաց.
Սարսեց ու սթափուեց, բարձրացրեց աչեր,
Տեսաւ, որ արդէն գիւղին են հասել...

Թ

Փողը հնչեցրին և բաղը մտան,
Թեթև ու արագ ձիուց վայր թռան.
Ժպտերես դիմեց նոցա հարսնաղբէր.
«Բարո՛վ էք եկել փեսայ, խըշաղբէր
Եւ դուք ուղեկից աշխոյժ մակարներ.
Եկե՞լ էք արդեօք, որ քրոջս տանէք,
Բայց գիտցէք, նորան այսօր կորցրել ենք...
Նա լուսադիմին փախել է տանից,
Չգիտենք ո՞ւր է, կորել մեզանից։
Մտէք հանգիստ տուն, եղէք անվրդով,
Մարդ ենք ուղարկել կըգտնեն շուտով..»
Ծիծաղ բարձրացրին հարսանքաւորներ,
Հանաք կարծեցին հարսնաղբօր խօսքեր.
Սակայն միայնակ խեղճ Ազատ փեսան
Բնական էր գտնում խօսքերը գուժկան։

Երեսը դալուկ, նայուածքը ապուշ,
Չէր մխիթարում խօսքերով քնքոյշ...
Հանուր տխրութիւն տիրեց բոլորին,
Հարսանքաւորին և թագաւորին։
Լռիկ ու մնջիկ հանգիստ տուն մըտան
Եւ օջախի շուրջ շար է շար նստան.
Բայց աղմկում էր հանուր լռութիւն
Հարսնաղբօր կեղծուած մխիթարութիւն։
Դէպքը, գտնելով բնական մի արարք՝
Պատմում էր անթիւ նման պատահարք.
Բայց չէր զգում, որ իրեն քրոջ համար
Այդ անժամ պսակ մահ պէտք է դառնար...

Ժ

Նաթէլին փնտռող խուզարկու մարդիկ
Էլ անտառ, այգի, լեռ, ձոր չըթողին,
Ուր չորոնէին փախստականին,—
Ուրախ հանդէսը սգի փոխողին։
Վերջապէս գտան որբիկին այգում,
Նստել էր բարձր թփերի միջում,
Մինչև գոտկատեղ ծաղկունք չորացած
Նաթէլին խնամքով ունէին գրկած։

Հետը փախցրել էր տիկնիք, խաղալիք,
Որոց սիրում էր իւր մանուկ տարիք.
Միամտաբար խաղում էր անվախ,
Մերթ սրտաճմլիկ քաշում էր խոր ախ...
Բայց աւաղ, շուտով նրան կըգտնեն,
Թուք ու ապտակով անշուշտ կըմատնեն
Այդ վատասեռոյ հին սովորութեան,
Ազատ մանկանից՝—հարսի ճորտութեան...
Պէտք է բաժանուի իւր ընկերներից,
Որոց հետ անքակ իւր մանկութիւնից
Ճրջել է մօտիկ լեռ, անտառ և ձոր,
Ծաղկունք են քաղել նուրբ անուշահոտ։
Փնջել են, կախել իրենց կրծքերից
Եւ վազվզել են արագ՝ եղնիկից...
Ո՜հ, այդ ամենից պէտք է նա զրկուի,
Ծննդավայրից հեռու արտաքսուի,
Մի օտար աշխարհ, որ նա չէ տեսել,
Միայն հեռուանց անունն է լսել։
Պէտք է դընայ Կողբ, բայց ինչու համար,
Մթթէ հօրանց տանն քնելու տեղ չկար...
Բայց խեղճ որբիկին քշում են հեռու,
Դեռ չբիւրացրած թէ ո՞ւր և ինչու...

ԺԱ

Ստուգատեսներն անցած օրերի
Շարէշար անցան գլխով Նամիկի.
Ցանկալի ձայն լսեց. «Այդ դու՞ ես Նամիկ,
Ո՞ւր ես անգլամ ամբողջ օր փախել...
Նա կայծակնահար մի ճիչ արձակեց,
Ընկաւ թուլացած և ուշաթափուեց։
Երբ ուշքի եկաւ ակնածեց ապշած,
Տեսաւ շորս բոլորը մարդկանց հաւաքուած.
«Ա՜յ, դու՛, անիծուած, այդ ո՞ւր ես փախել,
Բարեկամներիդ սգի մէջ թողել։
Մենք դիշերահան դեռ չէր լուսացել,
Որ սկսեցինք քեզի որոնել.
Լեռներ, ձոր, անտառ մեր ծանօթ տեղեր
Փնտռելուդ համար բնաւ չենք թողել։
Ոչ ծընող ունիս և ոչ բարեկամ,
Որ մեր տանջանքներ վարձատրեն անդամ.
Վեր կաց, չես լսում թագստեան տեղից,
Հինգ ժամ է արդէն եկել են Կողբից.

Սակայն լսելով քո անմիտ արարք՝
Հնչեցնում են մեզմ տխրալուր սեգեահ*)
Եւ մինչ երեկոյ կածէին այդպէս,
Եթէ մենք այսօր չգտնէինք քեզ.
Իսկ առաւօտեան կրդառնային յետ,
Այն ճանապարհով, որ եկան այստեղ։
Անպիտան աղջիկ, անտէր կրմնայիր
Եւ դու ում վզին պիտ՝ ծանրանայիր.
Չես զգում արդեօք, որ չունիս ծնողներ
Եւ ոչ սրտակից մօտ բարեկամներ։
Ո՞ւմ մօտ կրգտնես դու պատսպարան,
Կերակուր, հագուստ և տաք բնակարան...
Ի՞նչ ես վայ տալիս... կրգնաս նորա հետ,
Երբ կրցանկանաս նորէն կրգաս յետ։
Ազատը կլինի տէր և ամուսին...
Այդ բանը հարկաւ չեն ըմբռնելի
Դեռ քո տարիքիդ... Այդպէս է օրէնք,—
Այդ նոյն հասակում մարդու ենք գնացել,
Բայց քեզ պէս երբէք չենք ընդդիմացել,
Կամակորութիւն մենք չենք ցոյց տուել։
Քո տհաս տեղովդ ասա՛ մի լինչ ես,
Որ կնոջ օրէնքներ ոտնատակում ես։

---

*) Պարսկական ամենատխուր եղանակն է։

Ազատը կ'լինի քեզ համար հայր, մայր...
Կրսիրէ սրտանց, որպէս մի եղբայր...
Տիկնիք խաղալիք վեր կաց, հաւաքէ,
Փեսան խոստացաւ հետդ կրտանէ...

ԺԲ

Եւ ստրկահոգի գեղջուկ պառաւներ
Այդ ամուսնութեան կարգ ու կանոններ,—
(Մանուկ հասակում որոց ենթարկուել)՝—
Սիրում են սրտով, հոգով են կատուել։
Աշխատում են միշտ անարատ պահել
Եւ աւանդաբար հայ կնոջ աւանդել
Այդ օտարամուտ հին սովորութիւն,—
Ստրկական կեանքի հետևողութիւն...
Նախէլի առաջ ողբան որ ոյժ կար
Գործ դրեցին իրենց լեզուներ ճարտար.
Սպանիչ խօսքերով խո՛ր խոցոտեցին,
Տարաբաղդ որբի արցունք հոսեցրին։
Ողբին ձայնակցող արձագանք դաժան
Յաւակցութիւն էր բերում լացարժան.
Դա դժբաղդ աղջկայ մօրն էր գերեզման,
Որ ողբում էր լո՛ւռ դստեր ասլագան։

Զայնակից էին մերկանդամ անտառ,
Ամեհի ձորեր, լեռներ, առապար...
Ամենքն էլ զգացին ողբի արձագանք,
Խուլ ճիչ ու կսկիծ, անվերջ տառապանք.
Ողբաց և Նաթէլ, անյագ-անկշտում,
Պատած բնութիւնն մեզմ ձայն էր պահում...

ԺԳ

Եւ մորմոքելով Նաթէլը սիրուն՝
Թափում էր առատ դառնագին արցունք,
Նոցա յորդորանք—կեղծ, սոփեստական
Չէր մտնում ուղեղն երեխայական։
Փնտռողների դէմ բողոք բարձրացրեց,
Վախկոտ հայեացքով միտքը բացատրեց։
Բայց նոցա սրտերն նա չըթափանցեց,
Ոչ մի շրթունքից բնաւ չլսուեց
Գէթ մի խրախուսանք, այլ և նախատուեց,
Որ աւանդական հայ կնոջ օրէնքներ
Իւր տհասութեամբ ոտնատակում էր...
Սքանչելի էր նա այդ վայրկենին,—
Վարդագոյն այտեր կուսական դէմքին—

Եւ սաթեայ մազեր երկար, զզզուած
Կախարդեցին ողջ շրջապատողաց։
Ամենքն էլ զգացին քարասիրտքն անգամ,
Որ հարս են դարձնում դեռ շատ վաղաժամ.
Մանուկ հասակում մեռցնում են որբին,
Բռնի ստիպելով կին գնալ Ագատին։
Բայց ոչ մի շրթունք չէր խոստովանում,
Ճնշում էր զգացմունք և չէր բարբառում...

ԺԴ

Նաթէլը լալով յուսահատ եղած,
Իւր թոթով լեզուով այս խօսքերն ասաց.
«Ի՞նչ էք կամենում, թողէք ինձ մենակ,
Թողէք, ուրիշներ գընան իմ տեղակ։
Թող սոված, անտէր մեռնեմ ես այստեղ,
Սակայն չեմ ուզում գընալ մի այլ գեղ.
Ես չեմ ցանկանում ոչ ձեր Ագատին,
Ոչ Նորա Կողբայ բարեկամներին։
Ա՜խ չեմ ուզում, չէ, կորչել այն տանից,
Որ ես սիրել եմ վեր ամեն բանից.
Ուզում եմ ապրել, ձեր չափ մեծանալ
Եւ մեր օջախից բնաւ չ'հեռանալ...

Իմ ընկերներից ինչպէս բաժանուեմ,
Ո՜հ, ես միայնակ այնտեղ կըմեռնեմ.
Ընկերուհիներս, որոնց հետ ողջ օր
Զրջել ենք գիւղի վայրերը բոլոր։
Մօտակայ բաղեր, լեռներ, ձոր, անտառ
Հիւրընկալել են մեր պարեր կայտառ.
Այնտեղ ենք քաղել հոտոտ ծաղիկներ,
Հանդարտ ու խնամքով կապել ենք փնջեր։
Դրել ենք գլխներիս սիրուն պսակներ,—
Այդպէս են սահել մեր թրթռուն օրեր...
Բաղմիցս ժողովուած լերան ստորոտում
Երգել ենք, խաղցել այնտեղ ջան-գիւլում
Եւ մերթ իրարու ձեռք ձեռքի տուած
Զրջանապարը բռնել ենք ձգուած։
Այդպէս են սահել մանկական տարիքս,
Այժմ ձեր խօսքեր ճնշում են հոգիս։
Ո՞ւր էք միայնակ ուղարկում հեռու,
Գիտեմ, այնտեղից յետ չեմ դառնալու,—
Ծանօթ չէ ուղին։ Ո՞ւմ հետ ես խաղամ,
Մինչ վերադառնալ համբերել կարամ...
Թէ ընկերուհիքս այնտեղ գտնուէին՝
Ձեզ ուրախութեամբ կըհնազանդուէի...
Ծէսերդ էլ, թէև ոչ այնքան սրտով՝—
Կըկատարէի անլուռ, անվրդով...

ԺԵ

Ազդեցիկ եղան Նաթէլի խօսքեր
Մի քանի րոպէ թափանցել սրտեր
Հակառակ կողմի փաստաբանների
Եւ յաղթել նոցա բարբաջանքներին։
Աւաղ շատ էր կարճ...մանկան թոթովանք
Ռամիկ սրտերում չըգտաւ յարգանք
Ազդու էր րոպէն, տպաւորութիւն,
Բայց շատ էր կոպիտ, բիրտ բնաւորութիւն
Տղմի մէջ մեծցած խաւարի որդոց,
Ստրկական ոգով սնուած մարդոց։
Ծաղր ու ծանակի ենթակայ դարձրին,
Թուք ու ապտակներ վրան թափեցին.
Եւ թոյլ չըտուին, որ մանկան խօսքեր
Իրենց սրտերում ձգեն արմատներ։
Ինչպէս երեխայ կապած բարուրում
Քաղցածութիւնից անվերջ է ճըչում,
Այնպէս էլ Նաթէլ սրտնեղ, վշտալի
Ճչում էր, լալիս և արտասուալի
Խօսքեր էր թափում նուրբ իմաստալի...
Սակայն զուր էր զուր,—չկարողացաւ

Աւանդ պահողաց դարձնել ուշադրաւ.
Վրայ թափուեցին, կռան տակ առան,
Արագ քայլերով մինչև տուն տարան.
Իսկ նա յուսահատ մազերն էր փետում,
Մատներով սիրուն երեսն էր չանգռում։
Մերթ վերջին թափով բռնում էր թփեր,
Արիւնով պատեց իւր ճերմակ ձեռքեր.
Ինչպէս ջրահեղձ—ոյժով դերբնական
Նա հանդիսացաւ իւր անձի պաշտպան։
Եւ չէր անջատւում պաշտպան թփերից,
Մինչև չէր ընկճւում կոպիտ ոյժերից.
Թէև ցաւատանջ, բայց ակամայից
Առաջ են վարում ապաստարանից...

ԺԶ

Այս վիճակի մէջ բերին բնակարան,
Մօտ հարևանի սենեակը տարան.
Այնտեղ ողջ գիշեր նորան անբաժան
Զոյգ պառաւ կանանց դէրին պահապան...
Ցանձնառու եղան նորան հսկելու
Լուսացնել գիշեր և մնալ անքուն.

Թագուոր, հարսնադրէր, աշխոյժ մակարներ
Սուրբ երդում արին քէֆով լուսացնել։
Փողը ծվալով պարեր էր ածում,
Քէֆասէր տղերք խընդում են պարում,..
Լոյսը խաւարի հետ էր կռիւս բռնել,
Լուսոյ շաւիղներ նոր էր սփռուել,
Որ քնաթաթախ հարսին զարթացրին,
Ճուտափոյթ բռնի շորերը հագցրին։
Բնաւ չազդեցին թափուող դառն արցունք,
Առաջ քշելով տարան հարսենց տուն.
Օջախի առաջ հարսին ու փեսին
Իրարու կողքին հանգիստ կանգնեցրին։
Տէրտէրն էլ վրան շուրջառը ձգած,
Մի թաս օղիով կոկորդը թրջած՝
Բարձրաձայն օրհնեց նոցա հալաւը,
Գոռալով երգեց և շարականը.
Բայց փոյթ չէր նորան, թէ փեսի կողքին
Կանգնած էր մի որբ,—զոհ իւր որկորին։
Այլոց կըթուար՝—տարիքով Ագատ
Պսակում է իւր աղջկան հարազատ...
Ցամրաքայլ գնացքով ժամը դիմեցին
Պսակի խորհուրդ շուտ կատարեցին։
Առանց հարցնելու իրար հաւանում,
Կամ թէ միմեանց հետ սիրում են կապւում.

«Աւելորդ է այդ», —տէրտէրը դատեց,
Ուստի պսակի կարգը կրճատեց...

ԺԷ

Նախաճաշելու հարսենց տուն դարձան,
Աստուծոյ տուածից կերան յագեցան.
Յարգ հաւաքեցին, փողը վշեցին,
Գինովցած տղայք ձիանք նստեցին։
Մի առ ժամանակ ճեմեցին կալում,
Հերթով պարեցին ընդարձակ բակում.
Ժամ էր մեկնելու... Ահա դուրս բերին
Սիրտ մորմոքեցնող սիրուն Նաթէլին։
Նորա սեագոյն գրաւիչ աչերից
Արցունք էր հոսում անմեղ դառնալից.
Ակէխարշ վտակ անհատ աղբիւրից
Վազում էր վէտ-վէտ կարմրագոյն այտից։
Ձեռքերին բռնած որպէս երեխայ
Նստացրին սիրուն նժոյգի վրայ.
Շրջապատեցին նորան չորս բոլորը,
Կարծես թէ լինէր մի կալանաւոր,
Որից վախեցած մի տասնեակ զինուոր
Սուլիններին ներքոյ տանում են աքսոր...

ԺԸ

Թմբուկն առջևին ուղի բռնուեցան,
Գիւղի սահմանից շուտով հեռացան.
Ծանր էր կացութիւն Նաթէլի համար,
Երբ ոտքը կոխեց մի օտար աշխարհ,—
Ծննդավայրից, օջախից հեռու,
Իւր շրջագայած սահմաններից դուրս։
Գողունի հայեացք իւր շուրջն էր տածում,
Որպէս երեխայ դողում էր սարսում։
Սովոր էր գիւղի հարևան մանկանց,
Տեսնում էր այժմ անծանօթ մարդկանց.
Պաշարուեց վախով երեխայական,
Որից որբիկ խեղճ և թշուառական
Անզօր դտնուեցաւ իւր միտքն անջատել,
Ներկայ վիճակի հետ համակերպուել։
Եւ չէր ազատւում վախկոտութիւնից,
Այդ՝—մանկանց յատուկ սովորութիւնից...

ԺԹ

Ողբ գիւղը մտաւ խումբը գերավար,
Իւր հետն էր տանում հաղուագիւտ աւար.
Իսկ հայկական հին չախմախլու թուանը
Հեռու լեռներում գտաւ արձագանք։
Հարսանքաւորաց աւետիս հասցրին,
Որ աննման գեղ հարսը բերեցին.
Կալի, սրահների, կտրի վրայից
Դիտւում էր անթարթ գիւղականներից։
Եթէ որ Նաթէլ բաղաքում գտնուէր
Կասէին.—«Ներկ է այտերին քսել».
Բայց պարզ է մի բան, որ հայ գիւղերում
Արուեստական փայլը չեն տիրապետում։
Ամօթից աղջկայ վարդագոյն այտեր,
Կարծես թէ մի զոյգ մայիսեան վարդեր
Նորա գեղանի ընչացքի վերև
Բացել էր գարնան կենարար արև։
Ամենքն էլ ապշած յետ էին դառնում,
Նախանձ ածելով իւրեանց սրտերում.
Թէ ինչու Ազատ, գիւղի մի յետին
Պէտք է ունենայ այդչափ սիրուն կին...

Ի

Փեսատան կողքի հարևանի դրան
Հարսանքաւորներ մի քիչ կանգ առան.
Փեսի աղգական Պետոն դուրս բերեց
Մի գաւաթ գինի, փլաւ ու ձուաձեղ։
Ձեռքերին բռնած յառաջ դիմեցին,
Փեսատան սրահից հեռու կանգնեցին
Տանը խնդակցող մօտ ազգականներ
Պարով, համբոյրով շնորհաւորանքներ
Մատուցին հարսին և թագաւորին,
Մաղթելով կեանք, սէր մինչև օրն վերջին։
Ապա մատուցին իրենց նուէրներ,—
Պէս-պէս սկուտեղներ և թաշկինակներ.
Թագաւորի տանն այն գորգի վրան,
Ուր պիտ՝ կանգնէին նորահարս փեսան՝
Նստել էր մանուկ հինգ-վեց տարեկան,
Փող էր պահանջում,—ծէս սովորական։
Խաչեղբայրն արագ քսան կոպէկ հանեց,
Ինքնաբաւական երեխին մեկնեց։
Հանդիսից յետոյ յոգնած մակարներ
Հանգստանալու ցրուեցին տներ,

Որ երեկոյեան զուարթ, խոնջացած
Քէֆում իրարու մրցեն կատաղած...

ԻԱ

Մարդ ուղարկեցին, զանգակ հնչեցրին,
Հրաւիրականներ տուն հաւաքուեցին.
Սփռոց գցեցին, շարէ-շար նստան,
Ըստ աւագութեան օջախն շուրջ առան։
Ոտքի կանգնեցին ողջ ժողովականք
Լսելու տէր հօր սեղանի օրհնանք.
Աւարտելուց յետ ամենքն էլ ադատ
Կեր ու խում արին դեղին հարազատ։
Մատակարարներ ծանօթ պաշտօնին
Մատուցին անուշ, հայկական գինին.
Կարմիր ու սպիտակ, քաղցրահամ նեկտառ,
Որ ծոյլին անգամ դարձնում է կայտառ։
Քաղել է Հայոց աղջիկն դեռահաս,
Փափուկ մատներով քամել է տան հաս...
Մէջ ընթրիք եղաւ, սկսան բերել
Ազգականներից նուէր սեղաններ։
Կոչնակ զուռնաչին մէջ տեղ կանգնելով՝
Ցիշատակում էր բարձր գոռալով.

Թուում էր նոցա մէկ-մէկ անուններ,
Ինչից են կազմուած բերած սեղաններ.
«Հէյ Թագուորի խալխ, մակարներ»,—Համմէ
«Ամպրիք, Աստուած ձեզ իւր բարին կամ է,
Զէն կենայ, քեռի Ծիկօն, չէն կենայ,
Բերելայ ծանր սեղան, չէն կենայ...»
—Զէն կենայ,—գոռաց ամբոխն միաձայն,
Փեսի մակարներն հաստատեցին այն.
Եւ այսպէս կարգով յիշելով անուանք՝—
Հրաւիրականաց մատուցին սեղանք։
Վերջը քահանան ողորմաթաս խմեց,
Տանտիրոջ սուփռին լիութիւն մաղթեց.
Աղօթքից յետոյ ապա սկսուեց
Հին սովորութիւն՝—տգեղ թասընկեց։
Տէրտէրի առաջ դրուած սինի մօտ
Բերում էին թուղթ, սև ու սպիտակ փող.
Զուռնաչին բարձր գոռում էր գոչում,
Նուիրատուաց անունն էր յիշում.
«Զէն կենայ, Մաղօն, փեսի բարեկամ,
Տուեց մի մանէթ, սիրով, ինքնակամ.
Իսկ «չէն կենայ, չէն» պատասխանելով
Հաստատում էին մակարներ սիրով։
Սրախօսելով երբեմն զուռնաչին՝
Ծաղրական ձևէր տալիս իւր կանչին.

«Ա՜յ խալիս, չէ՞ն կենայ Խաչօն, տուելայ
Մի ծակ աբասի»,—Խաչօն չէ՞ն կենայ...
Փողովքից յետոյ փողը համբարուեց,
Տէրտէրն իւր ձեռքով կարգին բաժանեց։
Զուռնաչուն, գզիրին հալալ մաս հանեց...
Մարդկանցից յետոյ կանայք նստեցան
Եւ զարմանալի շուտով յագեցան...
Ապա ըսկսուեց տեղական պարեր,—
Դահրի, ծընդը-պար և *Զուրի* պարել.
Մարդ, աղջիկ և կին այդպէս պարեցին,
Ուրախ ու խնդում գշերն լուսացրին,..

ԻԲ

Հայ ազգին յատուկ սովորութեան պէս
Այդ հարսանիքն էլ երեք օր տեւեց...
... Անցաւ մի ամիս. Նաթէլն էր ընկած
Մահուան անկողնում... բայց ինչ էր պատճառ...
Արդեօք, նա յիշից մանկական զբաղմունք,
Հայրենի երկրում, հայրենի հողում,
Թէ էր վաղաժամ և դեռ անպատրաստ
Գլխին դնել պսակ, մտնել յառագաստ...

Անյայտ մնացին, բայց ցաւը տանջող,
Անհանգչելի ջերմ,—ախորժակ փախցնող՝
Կերպարանափոխ արել էր նորան,
Այլևս չկար Նաթէլ անունան։
Մարել են նորա հմայող աչեր,
Սպիտակ շուշանի փոխուել են այտեր.
Այլ չէր նշմարւում վառ արեան հետքեր,
Երակներ դարձել մազի անօթներ։
Անկողնի միջին երևում էր նա,
Որպէս վաղուցուայ հիւանդ երեխայ.
Զարդը վարդագոյն այդպէս մաշուեցաւ,
Մեղրամոմի պէս գունատուեցաւ...
Վեց ամիս տեւեց մինչ առողջացաւ
Եւ ազատ ման գալ նա կարողացաւ.
Եօթը ձիգ տարի նորան վիճակուեց
Իրա ամուսնուն կնութիւն անել.
Բայց եօթը տարում բնաւ չծնաւ,
Ո՛չ արու, ոչ էգ զաւակ չբերաւ...
Եւ պարզ է... ինչպէս մեղուի փեթակում
Կրետը գողունի մեղր է գողանում
Եւ փեթակի ողջ նորհաւաքս պաշար
Կորչում է անհետք, անօգուտ, անշահ...
Իսկ երբ գալիս է ժամը կտրելու,
Մեղուի փեթակից մեղրը հանելու՝

Տէրը գտնում է փեթակն դատարկուած,
Մեղրաճանճերն էլ մէջը սատակած...
Հարսին վիճակուեց նոյն օրերն անգութ,
Նոր հաւաքս ոյժեր վատնեց անօգուտ...

ԻԳ

Եօթը տարուայ մէջ հէգ Ազատի տանն
Աճեց մի նշան մեծ դժգոհութեան.
Դեռահաս Նաթէլ բարեկամաց հետ
Վարում էր կոպիտ, նայում էր շատ խէթ։
Համարում էր նա անսիրտ դահիճներ,
Որ խաւարեցրին իւր մատաղ օրեր.
Ազատութեան վառ լոյսից են զրկել,
Արգելանոցում գոցել, բանտարկել։
Եւ այս չար միտքը օրէցօր աճեց,
Նաթէլին հլու ազախին դարձրեց։
Ծառայեցնում էր ըստ իրեն կամաց,
Խնամոց հակառակ տուեց նա ընթաց։
Ատեց բոլորին—տան մօտիկ մարդոց,
Մինչև իսկ իրենց դրան անասնոց...

Նաթէլի համար կեանք էր կրկնակի
Երբ մարդը տանից գնացած էր գործի։
Առանձնանալով մի խաղաղ տեղում՝
Ժպտադէմ անյայտ միտք էր փաղաքշում.—
Փախչել կաշկանդող այդ ճնշող բանտից,
Իսպառ հեռանալ Ազատի տանից։
Նորան նպաստեց իւր փորձառութիւն,
Մերթ անկախ, ազատ շրջագայութիւն.
Նա այդ ցնորքներին սիրով հետևեց,
Եօթներորդ տարում ճիշտ իրագործեց...

ԻԴ

Տասնեվեցամեայ Նաթէլ գեղանին
Շատ էր փոփոխուել յընթացս եօթ տարի.
Բարակ ու նուրբ մէջք, հասակով երկար,
Գրաւիչ աչեր ցայտում էին վառ։
Ցօնքերը թաւշեայ կիսաշրջանով
Պարփակել էին աչկունք մեծ շքով.
Այտերի կարմրուկ տեղի էր տուել
Սպիտակ նորաբաց շուշանի փոխուել։

Նորա ժամ-տարիք սիրով էին վառ,
Պատրաստ էր կամաւ նետուել բազկատար
Գիրկը այլ մարդկանց,—իրեն հաւանած,
Խոհուն հասակի ընտրութեամբ գտած...
Ընդունակ էր նա սիրել, սիրուելու,
Իւր սրտի եարին անձը զոհելու.
Սակայն համբերեց, սպասեց լռելին,
Առ ժամ հնազանդուեց իւր ճակատագրին։
Զուել էր աչքեր դէպի Ոսկէպար,
Սպասում էր սպասում պատասխան չկար.
Մարդ էր ուղարկել միակ եղբօր մօտ
Պաղատանքներով—ձի հասցնէ շուտով։
«Թէ,—ասպարել էր,—դու ինձ բացասես՝
Շուտով իմ մահուան զոյժը կլսես»...
Եղբայրն վախեցած քրոջ միտումներից—
Մի ճարպիկ նժոյգ ուղարկեց գիւղից...

ԻԵ

Ամառն էր։ Վերուստ բոլորակ լուսինն
Գունդագունդ շողեր սփռում էր չորս դին.
Նորա բոլորտիք աստղեր անհամար
Չէին պպզում, չէին ուժգին վառ։

Եւ հերոսուհուն—փայլուն լուսնեակին
Հնազանդում էին, թէև վշտագին.
Տրտունջ ու նախանձ... կուզէին նայել,
Ընդարձակ երկրին ծաղրել ծիծաղել...
Անցաւ մի ամիս ինչ գնաց Ազատ,
Ճարելու մի գործ, փոքրոր աշխատանք.
Որ դէյրաներ գնէ, Նաթէլին պճնէ,
Կեղծ միջոցներով իւր հետ հաշտեցնէ։
Տանը մարդ չկար։ Հարսը տխրալուռ
Անհամբերութեամբ նայում էր հեռու.
Ոտնաձայն լսեց հանգիստ չափաւոր,
Շուտով երևաց և մի ձիաւոր։
Նաթէլը վճռեց նորան վարձատրել
Թոյլ տալով այտին զոյգ համբոյր դրոշմել...
Եւ տղան ուխտեց ցմահ ծառայել,
Այդ պատուի համար իւր անձը զոհել։
Շուտով երկուսն էլ առանց յապաղման
Կապած պիտոյքներ բարձեցին վրան
Նաթէլն վեր եկաւ, նստեց երիվար,
Անդարձ սլացաւ մի հեռու գաւառ...

ԻԶ

Անցաւ մի ամիս. խեղճ Ազատի տանն
Անհանգչելի մնաց մի սուգ ու շիւան.
Ծանօթ ազգական գալիս էին տուն,
Մխիթարելու կնիկկորուս մարդուն։
Մաղ մնաց Ազատին դէպքը ցաւալի
Բերել մահաբեր օրեր սգալի.
Բայց աշալուրջ խնամք բարեկամներէն
Նորան կորզեցին մահուան ճանկերէն։
Իսկ խուզարկութիւն ըստ իրեն կարգին
Շարունակւում էր Նաթէլի մասին.
Վերջապէս գտան Լօռու գաւառի
Արճէշ գիւղի մէջ, մի տան օտարի...
Առաջին անգամ այդտեղ զգաց Նաթէլ.
Թէ ինչ բան է սէր կամ սիրոյ հրդեհ,
Սիրոյ զօրութիւն և սիրոյ տաճար,
Որին կրաւէր իւր սրտի պաշար...
Դորան յաջորդեց խնդրագրութիւններ
Եւ կոնսիստորին բացատրութիւններ.
Հակառակ կողմից անուշադրութիւն,
Գործի քննութեան անկարողութիւն...

Փոխանակ չարեաց արմատ կտրելու
Եւ երևոյթի պատճառ գտնելու՝
Միամտութեամբ մարդու են պատժում,
Որ պատահական չարիքն է գործում։
Եւ մինչ չարութեան արմատ չկորզեն,
Հիմքը դրութեան խպառ չ'աւերեն՝
Բնաւ չեն հասնի օրեր բարւոքման,
Զենք կարող ցաւին անել մի դարման։

ԻԷ

Անցաւ չորս տարի։ Այդ միջոցներում
Ազատն անդադրում փող էր աշխատում.
Քրտինք էր թափում, իւր ջանն էր մաշում,
Բայց նպատակից բնաւ չէր շեղւում։
Ծրագրած ունէր ժողովել գամար,
Լոկ կաշառակեր մեծերի համար.
Գէթ նոցա շնորհիւ կարենայ բերել,
Սիրուն Նաթէլին կրկին կողակցել։
Խոստացաւ լինել լուռ, անյիշաչար,
Միմիայն թէ նորէն Նաթէլը յետ դար.
Կաշառքներ տուեց քեօվխին, քէնթխուդին՝—
Տասնեակ ռուբլիներ, այլ և տէրտէրին։

Ոմանց փող տուեց և ոմանց սանակ,
Խեղճը զուր կտրեց ջէրի բարաբեակ.
Նորան յաջողուեց փոքրիկ խումբ կազմել,
Քեօվխին, քէնթխուդին համաձայնեցնել։
Մի արշաւախումբ Արճէշ ուղղեցին,
Խօսքով ու փողով ոյժեր գործ դրեցին.
Հազիւ յաջողուեց Նաթէլին փախցնել
Մեծ խոստմունքներով մինչև Կողբ հասցնել։
Նաթէլը սպառնաց խեղդամահ լինել,
Եթէ որ բռնի մարդու տուն տանեն
Սպառնալիքներից նոքա վախեցան,
Ազատին յանձնել չհանդուրժեցան։
Հարսը պահ տուին գիւղի իշխանին,
Եւ տասն օր փակուած այնտեղ պահեցին,
Մինչև Նաթէլին նոքա ականջ դրին
Եւ գործակալին կանչել յանձն առին...

ԻԸ

Խորհուրդ տուեցին Ազատին գնալ
Ցայտնի մօլի մօտ և գիր անել տալ.
Կարծում էին թէ դեղուած է Նաթէլ
Որ իւր ամուսնուն ատում է յաւէտ...

Օրերից մի օր գնաց Ստամբէկլու,
Հաջի-Աֆանդին դիմեց օգնելու.
Ղազախի թուրը, հայ այդ մեծ իսլամին
Պաշտում էին վերթ սուրը փիշամբարին։
Եւ հարիւրաւոր վերստերից հեռու
Ուխտի էին գնում սրբին տեսնելու,
Նորա սրբազան զգեստը համբուրում
Ձեռքերն լուացած ջրիցը ստանում.
Բերած ընծաներ մատուցանելով
Ցետ էին դառնում գոհունակ սրտով...
Ազատն էլ շտապեց. սովորութեան պէս
Չոգէչոգ գնալ կալից սկսեց.
Չոգած մօտեցաւ սրբազան թախտին,
Որտեղ բազմած էր Հաջի-Աֆանդին։
Համբուրեց նորա ոտքեր ու ձեռքեր,
Դառնացած պատմեց իւր կիզիչ ցաւեր.
Ղազախի պաշտած այդ մեծ գրբացից
Օրհնանք ստանալով հարազատ բերնից՝
Կրկին չոգէչոգ գնաց մինչև կալ,
Հազիւ կարացաւ այնտեղ վեր կենալ։
Գոհունակ սրտով, ժպտալից դէմքով,
Կասկածանքներից իսկ փարատուելով՝
Կողբ վերադարձաւ ժամը երեքին,
Գնաց տեսութեան իսկոյն Նաթէլին։

Մեծ էր համոզմունք, որ իւր գեղանին
Գէթ այժմ կ'անսա սրտի բաբախին...
Ընկաւ լալագին սիրուհու առջև
Հայցելով սպանել կամ շնորհել արև։
Բայց նա շուտափոյթ դարձրեց վեհ երես,
Զարժուեց, հեռացաւ սիգաճեմ ու վէս...
Ազատը դալուկ հաղիւ վեր կացաւ,
Իւր վերջին ճիգն էլ ի դերև ելաւ։
Այժմ նա յանձնուեց իւր ճակատագրին
Եւ գործակալի վերջնագիր վճռին...

ԻԹ

Եկաւ գործակալ։ Մարդ ուղարկեցին,
Նաթէլին շուտով մօտը կանչեցին.
Կիտուած յօնքերով հարց ու փորձ արեց,
Կրակոտ աչքերով նորան այպանեց։
Բայց չէին ազդում Նաթէլի վրայ,
Տարիքն ու կեանքը նորան կրթելայ.
Կլտրիշ էր հիմա, որպէս տղամարդ
Չունէր նա սրտում ոչ վախ և ոչ դարդ։
Քսանամեայ հասակ, փոթորկալի կեանք
Եւ ամեն կողմում անվախ թափառանք

Տուել էր նորան կամքը երկաթի,
Մերժում էր լինել կինը Ազատի։
Ասում էր. «Տէր-հայր, կամաւ չեմ գնայ,
Բնաւ Ազատի ես կին չեմ դառնայ.
Դուք վրդովեցրիք իմ անդորրութիւն,
Անմեղ վարքս ու բարք և իմ մանկութիւն։
Կարգակիցներիցդ մէկը ինձ բռնի
Ստիպեց դառնալու կինը այս մարդի,
Որին միակ օր, յօնքերիս տակով
Դիտեցի ապշած, մանկական վախով։
Զէի հասկանում ինչ էր կատարւում,
Ձուրջառով տէրտէրն ինչ էր մրմնջում.
Կամ մի օտար մարդ մեր տունը եկած
Ինչու էր կողքիս լուռ ու մունջ կանգնած...
Բայց ո՜հ պարզուեցաւ... վեց ամսից յետոյ
Կրկին երևցան դաւուլ-զուռնայով.
Բայց սորանց չմղեց գիշերանց փախուստ,
Մեր այդի միջում թփերում թագուստ։
Ծեծով, թքելով բռնի ինձ տարան
Եւ պսակեց մի տէրտէր անարժան...
Ինձ ձի նստացրին, այստեղ բերեցին,
Խաղալիքներից և ընկերներից
Վաղաժամ էր, որ ինձ բաժանեցին։
Անցաւ մի շաբաթ և ես զգացի,

Որ ամուսնութեան պատճառն է տարփանք...
Որդեծնութիւն՝ բնական հետևանք. .
Երկու բանիցն էլ անշնորհք գտնուեցայ...
Նախ վեց ձիգ ամիս ես հիւանդացայ,
Երկրորդ՝ եօթն տարում որդի չծնայ։
Վճռել եմ արդէն հէնց այստեղ մեռնել,
Բայց չեմ ցանկանայ նրան կողակցել.
Այն ես գիտեմ իրաւունք ունէք
Բռնի ստիպելով մօտը ուղարկել։
Բայց կամք ունեցէք ինձ հաւատալու,
Որ առաւօտեան յետ ենք կանչելու,—
Երկար շուրջառովդ կատարելու կարդ
Հողին յանձնելու իմ սառած դիակ...
Թէ ցերը երկնից, մեր մեծ Դատավար,
Հարցնէ բացատրանք մեղքերիս համար՝
Կըպատմեմ նորան խօսքով սրտաբուխ,
Մատնացոյց կանեմ ձեզ, ով սնագլուխ,
Որ անխղճաբար հոգին ու մարմին
Վաճառած ունիք ժանտ մամոնային.
Ինձ օրս գցեց տաբաժամ պսակ,
Վարքս անարատ դարձրիք անառակ...

Լ.

Այս դէպքից յետոյ երկու ժամ չանցաւ,
Որ գեղամիջում մեծ աղմուկ ընկաւ.
Դէս-դէն վազեցին, սակայն չգտան,—
Կորել էր Նամէլ անհետք և անդարձ...
Մարագի միջում ճոպան էր կապել,
Գլուխը անմման մէջ էր անցկացրել.
Մերժումից յետոյ երեք ժամ չանցած
Նորա իրանը կախուած էր սառած։
Ազատն վազեց տուն դալուկ, հեալով,
Հեղեղի նման արցունք թափելով.
Ասում էր. «ճիշտ է Նամէլիս ասած,
Մեր չարեաց հիմքն էր տարաժամ պսակ։
Կաշառք վերցնելով անխնայ զոհեցին,
Դեռ վաղ մեզ համար մահ պատրաստեցին.
Քանի՞ միամիտք զոհ են գնում դրանց,
Կորցնելով և կեանք, և՛ ողջ ստացուածք։
Անառակութիւն, թուլամորթ սերունդ
Ահա հին ցաւի ներկայիս արդիւնք...»
Անդին կորստով խսպառ խենթացած
Կապեց իւր մէջքին դաշոյնը սրած։

Նա մտամոլոր վազեց դէպ այգին,
Վերջին խօսք լսուեց. «Անէծք տէրտէրին...»
Ծանօթ, բարեկամ յետեւից ընկան,
Սակայն Ազատին գլխէն չըզտան։
Երբ լուսաբացին առաւօտեան դէմ
Ցկսան չորս կողմ ուշառու փնտռել՝
Մեծ ցաւ ու թախիծ պատեց բոլորին
Երբ գտան խեղճի անշնչացած դին,—
Կարմիր արեան մէջ խսպառ շաղախուած,
Դաշոյնը մինչև կոթ կրծքին խրուած...

Գինն է 10 կոպ.